

ՀԱՅԱՍՏԱՌԻ ԹՈՒՐՔԵՐԵՆԸ

Բոստոնի «Հայրենիք» շաբաթաթերթը մի շրջաբերականով հարցնում է մեր գրողներին ու գործիչներին, ի միջի այլոց և ինձ, թե.

«Հայկական տառերուն՝ արաբական տառերու փոխարեն՝ թուրքերու կողմեն թուրք լեզվի համար որդեգրվիլը, հայ լեզվին և գրականության օգտակար պիտի ըլլար, թե՞ վնասակար»:

Ես կարծում եմ էս հարցին պատասխանելու համար պետք է դեռ հարցնել, թե էդ երկու ժողովուրդներից ո՞րն է ավելի մեծ, որի՞ լեզուն ու գրականությունն է ավելի ուժեղ: Նրանից հետո պարզ կլինի և պատասխանը, թե նույն տառերով գրել կարդալը որի՞ համար կլինի վնասակար և որի՞ համար օգտակար:

Եթե թուրքերը հայկական տառերը որդեգրեն, դրա հետևանքն էն կլինի, որ նրանք մեր լեզվով գրածը կկարողանան կարդալ, մենք նրանցը: Մրանով կհեշտանա լեզվի, մտքի, ոգու փոխադարձ ազդեցությունը երկու կողմից էլ: Եվ անշուշտ, որ ազգը, որ լեզուն, որ գրականությունը ավելի ուժեղ է, նա էլ ավելի է ազդելու իրենից թույլի վրա ու հետզհետե, իհարկե, դարերի ընթացքում, ձուլվելու է իր հետ: Մի գործ, որ առանց էն էլ կատարվում է, բայց դանդաղ, իսկ սրանով ավելի կհեշտանա ու ավելի արագ կկատարվի:

Բայց սրա դեմ մենք ի՞նչ կարող ենք ասել կամ անել: Ոչինչ: Ոչ ապաքեն էսպետով կատարվում է ազգերի մեծ միության գործը: Եվ գեղեցիկ է նա ու ցանկալի: Մի բան, որ հին ժամանակները դժար էր կատարվում, որովհետև ազգերի հարաբերությունները է՛լ ավելի դժար էր, իսկ նոր ժամանակներում էնքան արագ է կատարվում, որ էս կամ էն առաջադեմ ժողովրդի մի սերունդը իր լեզվով, սովորություններով, նիստ ու կացով, ուտելիքով, հագնելիքով նկատելի կերպով տարբերվում է իր նախորդ սերունդից, և որքան տարբերվում է նրանից, էնքան նմանում է իր հարևան ժողովուրդներին: Իհարկե, հեշտ ու դժար փոխվելիք բաներ կան. օրինակ, գլխարկն ավելի հեշտ կփոխվի,

քան գլուխը, և վերջապես, էնպես առանձնահատկություններ էլ կլինին, որ կապված են կլիմայի և բնության այլ երևույթների հետ ու գուցե երբեք չեն փոխվելու:

Ասելս էն է, որ կուլտուրական մաքառումից փախչելը ապարդյուն բան է, եղ տեսակ խեղճը իրեն չի կարողանալու ընդմիջտ պատասպարի ոչ մի ցանկապատի ետև: Կուլտուրաների ու գաղափարների ազդեցությունները ոչ մի ցանկապատ չեն ճանաչում: Նրանք միջտ տարածվել են հողմի հետ: Իսկ այժմ, որ երկաթուղու, հեռագրի ու հեռախոսի նման հողմից արագ միջոցներ էլ են հայտնվել, ի՞նչ եք անելու: Մանավանդ որ դա համաշխարհային օրենք է և տանում է դեպի լույսը, դեպի լայնը, դեպի մեծը, դեպի ընդհանուրը:

Կուլտուրաների, լեզուների, օրենքների ու սովորությունների ազդեցությունները, ճիշտ է, ցավեցնում են, տգեղ են, պախարակելի են, բայց էն ժամանակ, երբ կատարվում են բռնությունով, ֆիզիկական ուժով: Մի բան, որ տգեղ լինելով հանդերձ, միաժամանակ անմիտ է, որովհետև տանում է միանգամայն հակառակ հետևանքի, հայտնագործում է թշնամական զգացմունք, վիրավորում է կոպիտ կերպով ու մարդկանց մղում է ետ դեպի իրենց սեփական, թեև նեղ, բույնը:

Էս տեսակետն ունենալով՝ ես ոչ մի վնաս չեմ տեսնում, եթե թուրքերը որդեգրեն հայկական տառերը, բայց մի՞թե, հիրավի, որդեգրում են, և եթե որդեգրում են, ես զարմանում եմ, թե ինչո՞ւ լատինական գեղեցիկ տառերը թող արած մեր ավելի տգեղ տառերն են ընտրել: Եվ եթե դիտմամբ են խուսափում լատինական տառերից, հետաքրքրական է, թե ինչո՞ւ: